ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

__ _____ 2024 թվականի №___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №516-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 9-ի №344-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №516-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ ԷՄՇ կանոններ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ԷՄՇ կանոնների 113-րդ կետից հանել «, ՀԾՄ-ի (Հանձնաժողովի սահմանված ամսական չափաքանակով)» բառերը.

2) ԷՄՇ կանոնների 128-րդ կետից հանել «ինչպես նաև» բառերը, իսկ «միջև» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ՀԾՄ-ի (Հանձնաժողովի սահմանած ամսական չափաքանակով) և Երաշխավորված մատակարարի միջև» բառերը.

3) ԷՄՇ կանոնների 26.1-ին գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 26.1. ՀԱՇՎԵԿՇՌՄԱՆ ԵՎ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԵՎ ԵՐՐՈՐԴԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

176.1. ՀՊԿԻ, ՀՊԿԽ կամ ՀՊԿԼ կարգավիճակ և սպառման համակարգ ունեցող ԷՄՇ մասնակիցները հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով ՀԾՄ-ին վճարում են երկրորդային և երրորդային պահուստի ապահովման ծառայության ամսական վճար (այսուհետ՝ Պահուստի ապահովման ծառայության վճար): Պահուստի ապահովման ծառայության վճարը հաշվարկվում է Շուկայի օպերատորի կողմից ԷՄՇ կանոնների 176.2-րդ և (կամ) 176.3-րդ կետերի համաձայն և արտացոլվում է ԷՄՇ կանոնների 236-րդ կետով նախատեսված ակտերում:

176.2. Պահուստի ապահովման ծառայության վճարի արժեքը, բացառությամբ ԷՄՇ կանոնների 176.3-րդ կետով նախատեսված դեպքի, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԾԱ_i = \frac{ՍՊ_i}{\sum_{i=1}^{n} ՍՊ_i} * ՀՁ_{ՀԷԱ}$$, որտեղ՝

1) **$ՊԾԱ_i$-ն**՝ ՀՊԿԻ, ՀՊԿԽ կամ ՀՊԿԼ կարգավիճակ և սպառման համակարգ ունեցող i-րդ ԷՄՇ առևտրի մասնակցի կողմից վճարման ենթակա Պահուստի ապահովման ծառայության վճարի արժեքն է (դրամ),

2) **$ՍՊ_i$-ն**՝ ՀՊԿԻ, ՀՊԿԽ կամ ՀՊԿԼ կարգավիճակ և սպառման համակարգ ունեցող i-րդ ԷՄՇ առևտրի մասնակցի բոլոր սպառման համակարգերով տվյալ ամսում փաստացի սպառված էլեկտրական էներգիայի քանակն է (կՎտժ),

3) **n-ը**՝ ՀՊԿԻ, ՀՊԿԽ, ՀՊԿԼ կարգավիճակ և սպառման համակարգ ունեցող բոլոր ԷՄՇ առևտրի մասնակիցների թիվն է,

4) **$ՀՁ_{ՀԷԱ}$-ն**՝ ՀԾՄ-ի կողմից տվյալ ամսում ՀԷԱ կայաններից փաստացի ձեռքբերված հզորության դիմաց վճարման ենթակա գումարն է (դրամ):

176.3. Երաշխավորված մատակարարի բոլոր սպառման համակարգերով սպառվող էլեկտրական էներգիային համապատասխան ՀԷԱ կայաններից հզորության ձեռք բերման հաշվարկային ծախսը ՀԾՄ-ի կողմից Երաշխավորված մատակարարին առաքվող էլեկտրական էներգիայի սակագնում ներառված լինելու դեպքում Երաշխավորված մատակարարի կողմից Պահուստի ապահովման ծառայության վճարի արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԾԱ_{ԵՄ} = \frac{ՍՊ_{ԵՄ}}{\sum_{i=1}^{n} ՍՊ_i} * ՀՁ_{ՀԷԱ} - ՀՁՀԷԱ_{ԵՄ}$$, որտեղ՝

1) **ՊԾԱ$_{ԵՄ}$-ն**՝ սույն կետում նշված դեպքում Երաշխավորված մատակարարի կողմից վճարման ենթակա Պահուստի ապահովման ծառայության վճարի արժեքն է (դրամ), որը բացասական նշանով ստացվելու դեպքում ընդունվում է զրո,

2) **ՍՊ$_{ԵՄ}$-ն**՝ Երաշխավորված մատակարարի բոլոր սպառման համակարգերով տվյալ ամսում փաստացի սպառված էլեկտրական էներգիայի քանակն է (կՎտժ),

3) **ՀՋՀԷԱ$_{ԵՄ}$-ն**՝ տվյալ ամսվա համար ՀԾՄ-ի կողմից Երաշխավորված մատակարարին առաքվող էլեկտրական էներգիայի սակագնում ներառված՝ Երաշխավորված մատակարարի բոլոր սպառման համակարգերով սպառվող էլեկտրական էներգիային համապատասխան ՀԷԱ կայաններից հզորության ձեռք բերման հաշվարկային ծախսն է (դրամ):».

4) ԷՄԾ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 233.1-ին և 233.2-րդ կետերով.

«233.1. ԷՄԾ կանոնների 47-րդ կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված դեպքերում, եթե ԷՄԾ մասնակցի հաշվառման ներքո առկա է ենթասպառող, ապա ԷՄԾ մասնակցի տվյալ Հաշվառման կետի դարձափոխիչային հաշվիչի սպառման ու առաքման տարբերության և ենթասպառողի Հաշվառման համալիրով գրանցված սպառման մեծության տարբերությունը՝ դրական թիվ ստացվելու դեպքում՝ այն Շուկայի օպերատորի կողմից հաշվառվում է որպես ԷՄԾ մասնակցի տվյալ Հաշվառման կետում էլեկտրական էներգիայի սպառած քանակ, բացասական թիվ ստացվելու դեպքում՝ այն (բացարձակ արժեքով) Շուկայի օպերատորի կողմից հաշվառվում է որպես ԷՄԾ մասնակցի կողմից տվյալ Հաշվառման կետում առաքված էլեկտրական էներգիայի քանակ:

233.2. ԷՄԾ կանոնների 233.1-ին կետով նախատեսված դեպքում, երբ ԷՄԾ մասնակցի հաշվառման ներքո առկա ենթասպառողի Հաշվառման համալիրը դարձափոխիչային է, ապա ԷՄԾ մասնակցի դարձափոխիչային հաշվիչի սպառման և առաքման տարբերությունից նվազեցվում է ենթասպառողի Հաշվառման կետի դարձափոխիչային հաշվիչի սպառման և առաքման տարբերությունը, որի դրական կամ բացասական մեծությունների դեպքում գործում է ԷՄԾ կանոնների 233.1-ին կետով նախատեսված կարգավորումը:».

5) ԷՄԾ կանոնների 240-րդ կետում «(էլեկտրական էներգիայի)» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Երաշխավորված մատակարարից գնված էլեկտրական էներգիայի» բառերը, իսկ

«ՀԾՄ-ն» բառից հետո՝ «Երաշխավորված մատակարարին՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 25-ը,» բառերը.

6) ԷՄՇ կանոնների 247-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 3-րդ և 6-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2025 թվականի փետրվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

__ _____ 2024թ.
ք. Երևան